«Արմենպրեսս» լրատվական գործակալություն, 20.05. 2015

http://armenpress.am/arm/news/806061/hayastanum-brendneri-dzevavorman-himnakan-khndiry--texekatvutyan.html

Հայաստանում բրենդների ձևավորման հիմնական խնդիրը տեղեկատվության պակասն է

Ապրանքային նշանների գրանցման և հետագայում բրենդի ստեղծման ճանապարհին ձեռներեցների հիմնական խնդիրը տեղեկատվության բացն է: Այս կարծիքին են «Արմբրենդ» համակարգի և «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի» մասնագետները, ովքեր հանդիպում էին կազմակերպել՝ քննարկելու Հայաստանում բրենդավորման խնդիրները: Մասնագետների կարծիքով՝ բրենդի կայացման փուլում խոչընդոտ է նաև սպառողական փոքր շուկան, սակայն նրանք օրինակներով ցույց են տալիս, որ նույնիսկ փոքր շուկայում կարելի է հաջողված բրենդ ստեղծել:

«Արմենպրես»-ի հետ զրույցում «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գևորգ Վարդանյանը նշեց, որ ձեռներեցների շրջանում հաճախ է շփոթություն առաջանում ապրանքանիշի և բրենդի տարբերակման ու նմանատիպ այլ հարցերի շուրջ, որոնք բխում են իրազեկվածության պակասից: «Այս փուլում կարևոր է պետության դերը, որ ձեռներցներին ճիշտ ուղու վրա դնենք: Մեր կենտրոնն էլ հենց կատարում է այդ գործառույթը: Ձեռներեցների մոտ կա տեղեկատվական բաց հատկապես մտավոր սեփականության օբյեկտների պահպանման հարցում, հետևաբար փորձում ենք նրանց խորհրդատվություն տրամադրել այս հարցի շուրջ»,- ասաց Վարդանյանը:

Նույն կենտրոնի մասնագետ Լիլիթ Վարդանյանն էլ հավելեց, որ ձեռներեցները իրենց մոտ փորձում են ճշտել, թե արդյոք իրենց հայտարվելիք նշանը արդեն գրանցվա՞ծ է, թե ոչ: «Ներկայացնելով ապրանքանիշի գրանցման հայտը՝ ձեռներեցն արդեն իսկ ծախսում է միջոցներ և ժամանակ, դրա համար մենք նրանց տրամադրում ենք համապատասխան տեղեկատվություն ապրանքային նշանների գրանցման և պահպանման համար»,- նշեց նա:

«Արմբրենդ» համակարգի նախաձեռնող Աշոտ Միրզոյանի հավաստմամբ, իրենք ցանկություն ունեն մայիսի 20-ը հռչակել որպես «Հայկական ապրանքանիշի օր», որպեսզի ավելի հաճախ խոսվի տեղական ապրանքանիշերի մասին և բարձրացվի մարդկանց իրազեկվածությունը:

Հանդիպման շարունակությունն ընթացավ տեսական հարցերի շուրջ: Բանախոսները հավաքվածներին էին ներկայացնում ապրանքանիշի և բրենդի տարբերությունները, օրինակներ բերում աշխարհահռչակ ընկերություններից և բրենդներից, տեղեկատվություն տրամադրում ապրանքանիշի գրանցման գործընթացի վերաբերյալ: